ձեռն ոստիկանին · և թէ ո՞րքան ինչս վատնեալ և կորուսեալ իցէ, թէ 'ի դրամոց եւ թէ յեկեղեցական անօթոց և այլոց, առնել ստումար · եւ ապա պատմել զամենայնն մի ըստ միոջէ յունկն դատաւորին · եւ զոր ինչ միանգամ գրեալ կայ 'ի հրովարտակին, անպատճառ գործադրել, և տալ գրել Հեօճճէթ, թէեւ լինիցի ծախք աւելի քան զ150 քսակս արծաթոյ, տալ և առնուլ զՀեօճճէթն եւ գրել զամենայն ինչ պարագայիւք, և առաքել ինքեան · զի թագաւորն և դենպէտն մեծ խնամով ինձ օգնական եղեն ասէ՝ 'ի հաստատութիւն հաւատոյս մերոյ և 'ի կործանումն ախթարմայից · և յատենի իւրեանց ինձ հաւատացին զազգն Հայոց · ածել յուղղութիւն զՖրանկացեալսն, եւ զանհաւանսն ազգ առնել նոցա : Զի թէպէտ ասէ · խոստացան Մինասեանք տալ 100 քսակս արծաթոյ, այլ ոչ ինչ շահեցան և շահին թէեւ տացեն 1000, զի ինձ յանձն արարին զազգն · 'ի 13 Յուլիս ամսոյ՝ (1702) ։

Եկն Նոր վեքիլն ընդ գափուճի պաշի Մեհէմմէտ Սէլամ աղային · գնացեալ միաբանից ածին զնա 'ի գիշերի 'ի վանս Ս · Յակոբայ 'ի սենեակ Մինաս պապայի : Եւ յաւուրն երկրորդի 'ի 18 Օգոստոս, կոչեաց դատաւորն զՄինաս վարդապետ միաբանօք, եւ յայտ արար զանկումն նորին յիշխանութենէ, և պատուիրեաց նմա տեսանել զհաշիւն ընդ նազրին, և դարձան անտի : Կոչեաց առ ինքն ոստիկան Աւետիք վարդապետի զՄինաս վարդապետ, եւ մեղադրանօք ասէ, ընդէ՞ր ոչ հանդիպեցայք մեզ : Դատաւորն կոչեաց զմիաբանս, և ընթերցաւ առաջի նոցա զհրովարտակ Աւետիք վարդապետի, և դարձան 'ի վանս : Դատաւորն դարձոյց յետս զյայտագիրն առ Մինաս վարդապետ՝ զոր տուեալ էին միաբանք վասն նորա :

Ծանուցումն յատենի եկեղեցւոյ եւ բարեմաղթութիւն վասն Աւետիք վարդապետի : Մէհէմմէտ Փաշա Նապլուսի առաքեաց զնուիրակապետն իւր, և խնդրեաց 'ի Նոր վէքիլէն տալ զպարգեւն : Գնաց Մինաս վարդապետ առ դատաւորն և էառ Հէօճճէթ վասն հաշուոյ իւրոյ : Նոր նազիրն փակեղամբ զարդարեցաւ 'ի քահէ Ս · Յակոբայ : Գանկատ այլազգեաց Երուսաղէմի զՓաշայէն սակս խըստութեան նորին : Նազր Կարապետն չոքաւ առ Մինաս